ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ԱՎԱՆԳԱՐԴ

ՕՐԳԱՆ ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ

«АВАНГАРД» ОРГАН ЦК ЛКСМ АРМЕНИИ

39-ՐԴ ՏԱՐԻ
№ 4 (6189)

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՀՈՒՆՎԱՐԻ 1962 Թ.

ԳԻՆԸ 2 ԿՈՊ.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ԵՌԱՆԴՈՎ

1962 թվականի առաջին օրերն են։ Նոր տարվա առաջին մի օրը մեր երկրի կյանքում նշանավորվում է մի նոր հաջողությամբ, մի նոր առաջատար քայլով։ Սովետական մեր մեծ երկրի աշխատավորները, ոգեշնչված ՍՄԿԿ XXII համագումարի պատմական որոշումներով, ամեն ինչ անում են, որպեսզի Կոմունիստական պարտիայի Ծրագրում նշված կոմունիզմի կառուցման 20-ամյա պլանը կատարվի ժամանակին։ 1962 թվականը այդ մեծ պլանի իրագործման առաջին տարին է։ Մեր երկրի բոլոր աշխատավորները գործում են մի նշանաբանով՝ այսօր է դրվում կոմունիզմի կառուցման հիմքը։

Մեր ռեսպուբլիկայի արտադրական ձեռնարկություններում աշխատող երիտասարդները, համարձակ կարելի է ասել, քայլում են մրցության առաջավորների շարքերում։ Նորարարները հանդես են գալիս նոր առաջարկություններով, գյուտարարներն ու ռացիոնալիզատորները ձգտում են մեքենայացնել, ավտոմատացնել աշխատատար այս կամ այն պրոցեսը։ Արտադրական ձեռնարկությունների շատ սկզբնական կոմերիտական կազմակերպություններ նոր տարվա հենց առաջին օրերից սոցիալիստական մրցությունը բորբոքել են բոլոր երիտասարդական կոլեկտիվներում։ Այժմ մեր արտադրական ձեռնարկություններում կոմունիստականի կոչման համար պայքարում են ոչ միայն առանձին բրիգադներ, այլ ամբողջ ցեխեր, հերթափոխություններ։ Կոմերիտական - երիտասարդական բրիգադների մեծամասնությունը մտել է այդ շարժման մեջ և պայքարում է ոչ միայն արտադրական առաջադրանքները կատարելու ու գերակատարելու համար, այլև թողարկվող արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու, հումքը, էլեկտրաէներգիան խնայելու համար։ Նրանք միաժամանակ մշակում են կենցաղավարության նոր նորմաներ հասարակական վայրերում, տանը, դրսում իրենց պահում են կոմունիստաբար։

Առաջիկայում խոշոր իրադարձություն է սպասվում ռեսպուբլիկայի երիտասարդության կյանքում։ Շուտով տեղի է ունենալու ՀԼԿԵՄ XXI համագումարը։ Կոմերիտական բոլոր կազմակերպությունները նախապատրաստվում են արժանավայել ձևով դիմավորելու իրենց համագումարը, զեկուցելու պարտիային այն հաջողությունների մասին, որ ձեռք են բերել պարտիայի ընդունած որոշումները իրագործելու ճանապարհին։ Համագումարը ամենայն իրավամբ խրախուսական խոսք կասի այն կազմակերպությունների հասցեին, որոնք մշակել են իրենց կոնկրետ պլանները, նշել յուրաքանչյուր երիտասարդի անելիքները կոմունիզմի կառուցման ճանապարհին։

ՍՄԿԿ XXII համագումարի ընդունած որոշումները, պարտիայի նոր Ծրագրի իրագործումը մեկ օրվա, մեկ շաբաթվա ու մեկ տարվա հարց չէ, այդ իսկ պատճառով մեր բոլոր կոմերիտական կազմակերպությունները պետք է օգտագործեն բոլոր ձևերն ու մեթոդները՝ բարձրացնելու աշխատավոր երիտասարդության մասնագիտական ու հանրակրթական գիտելիքները։ Չէ որ կոմունիզմի լուսաշող շենքի կառուցման համար անհրաժեշտ են գրագետ, բանիմաց մարդիկ։ «Յուրաքանչյուր բանվոր ինժեներ է իր տեղամասում» լոզունգը պետք է կիրառվի բոլոր գործարաններում ու ֆաբրիկաներում։

Արտադրական առաջադրանքների հաջող կատարմանը մեծ չափով նպաստում է արտադրության առաջավորների փորձի փոխանակումը։ ՀԼԿԵՄ շրջանային ու քաղաքային կոմիտեները ամենայն ուշադրությամբ պետք է ուսումնասիրեն ու լավագույն ձևով տարածեն մեր առաջավորների փորձը։ Աշխատանքի արտադրողականության բարձրացումը ամենակարևորն է մեր մեծ պլանների իրագործման համար։ Այս լավ գիտեն կոմերիտական բոլոր կազմակերպությունները, բայց ցավոք առանձին կազմակերպություններ վատ են պրոպագանդում մեր նորարարների ու առաջավորների փորձը։ Կարմիր անկյունները չեն օգտագործվում այդ նպատակի համար։

Սկզբնական կոմերիտական շատ կազմակերպություններ նորարարական ու գյուտարարական շարժման ծավալման հիանալի տրադիցիաներ ունեն։ Բայց վերջին շրջանում նրանք քիչ են օգտագործում այնպիսի փորձված ձևեր, ինչպիսիք մրցանակաբաշխություններն են, լուսամայակները։ Արտադրական այս կամ այն ետ մնացող տեղամասը կարելի է բարձրացնել միայն ռացիոնալիզատորական, գյուտարարական նպատակային կոնկուրսներ հայտարարելով, աշխատատար պրոցեսները մեքենայացնելով։

Ցավոք սրտի, վատ է խրախուսվում նաև նորարարությունն ու ռացիոնալիզացիան։ Ինչպես հարկն է չեն բարձրացվում լավագույն նորարարներն ու գյուտարարները։ Փոխանցիկ դրոշներն ու հուշադրոշները ամիսներ շարունակ մնում են միևնույն կոլեկտիվում, մի անհատի ձեռքում և չեն ծառայեցվում մրցությունը ավելի բորբոքելու համար։ Անհրաժեշտ է, որ ինչպես քաղաքային, շրջանային, այնպես էլ գործարանային փոխանցիկ դրոշներն ու հուշադրոշները կոլեկտիվներին ու անհատներին հանձնվեն հանդիսավոր պայմաններում, կոլեկտիվի մեծ մասի ներկայությամբ։ Այդ արարողությունները պետք է օգտագործել աշխատանքն ու աշխատավոր մարդուն փառաբանելու համար։

Ռեսպուբլիկայի պատանիներն ու աղջիկները իրենց համագումարն են գնում ավելի սերտ համախմբված Կոմունիստական պարտիայի շուրջը, նրանք բոլորն էլ համակված են մի ձգտումով՝ ամեն ինչ անել, երիտասարդական ամբողջ ուժերը ներդնել ՍՄԿԿ XXII համագումարի պատմական որոշումները մինչև վերջ կենսագործելու համար։ Երիտասարդները լի են իրենց խոսքը կատարելու վճռականությամբ։ Անհրաժեշտ է միայն, որ կոմերիտական կազմակերպությունները այդ մրցությանը տան նպատակային ուղղություն, այն օգտագործեն այս կամ այն թերությունները վերացնելու համար։

Դեպի գործ, ընկերնե՛ր, նոր տարին դարձնենք նոր խիզախումների, հայրենանվեր նոր գործերի տարի։

ԱՆԱՊԱՏՆԵՐԸ ՆՎԱՃՈՒՄ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

ԴԱՇԻ (Բուխարայի մարզ), 8 հունվարի (ՏԱՍՍ). Կզըլ-Կումի ավելի ու ավելի խոր հեռուներն է ձգվում Բուխարա-Ուրալ աշխարհի խոշորագույն գազամուղը։ Քայլ առ քայլ, հաղթահարելով դժվարություններ, համամիութենական հարվածային կոմերիտական կառույցի կոլեկտիվը «Երկնագույն կրակի» հսկա ուղեգիծը առաջ է տանում մեռյալ ավազուտներով։

— Մինչև 1963 թվականի վերջը ապահովենք Բուխարայի գազի մատակարարումը Ուրալին,— այսպիսի կոչով կառույցի երիտասարդներին դիմեցին ՍՍՌՄ Գլխգազվարչության մասնագիտացված 12-րդ վարչության մեքենայացված երրորդ շարասյան կոմերիտականները։ Նախաձեռնողները ծրագրել են իրենց աշխատաժամում ժամկետից տասներկու օր շուտ ավարտել բոլոր աշխատանքները, հինգ տոկոսով իջեցնել մեկուսանյութերի ծախսումը, ստեղծել օրինակելի շարժական ավաններ։

Երիտասարդ կառուցողների նախաձեռնությունը լայն արձագանք գտավ ամբողջ ուղեգծում։ Այժմ այդտեղ ստեղծվել է կառուցողների սոցիալիստական մրցությունը գլխավորող կոմերիտական շտաբ։

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵՑ ՄՍԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՌԱՄՅԱ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱԽՈՒՐՅԱՆ։ Մարմաշեն գյուղի կոլտնտեսությունը պետությանը վաճառեց 165 ցենտներ միս, որի մեծ մասը առաջին տեսակի։ Դեռ աշնան ամիսներին մարմաշենցիները բտման համար առանձնացրել էին մոտ քառասուն գլուխ խոշոր, հիսուն՝ մանր եղջերավոր անասուն և 32 խոզ։ Լավ խնամքի ու կերակրման շնորհիվ կովերի միջին քաշն ավելացավ 75—80 կիլոգրամով, իսկ ոչխարներինը 20—25 կիլոգրամից հասավ 30—35 կիլոգրամի։

Արտելը կատարեց պետությանը միս վաճառելու ընթացիկ տարվա առաջին եռամսյակի պարտավորությունը և մոտ քսան ցենտներ էլ հանձնեց երկրորդ եռամսյակի հաշվին։

Կոլտնտեսականները պարտավորվել են մինչև ապրիլ ամիսը լրիվ ավարտել պետությանը միս վաճառելու կիսամյա պարտավորությունը։

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

ԼԵՆԻՆԱԿԱՆ, 6 հունվարի (ՀՀԳ).— Երեկ էլեկտրատեխնիկական գործարանում ավարտվեց նոր յուրացված «ՆՕՄ—10» տիպի տրանսֆորմատորների առաջին 12 նմուշների հավաքումը։ Դրանց վրա դրոշմվեց 1962 թվանշանը։ Այս տարի ձեռնարկությունը թողարկելու է այդպիսի երեք հազար տրանսֆորմատոր, որոնք կօգտագործվեն բարձր լարման էլեկտրացանցերում։

Այստեղ յուրացվում է նաև ուրիշ երկու նոր տիպի էլեկտրատրանսֆորմատորների արտադրությունը։ Դրանցից երկրորդը կունենա էլեկտրական հոսանքի տատանումներն ազդարարող հատուկ սարք։

Ընթացիկ տարվա առաջին օրերից արտադրանքի նոր տեսակների արտադրության են ձեռնամուխ եղել նաև «Ստրոմմաշինա», դարբնոցամամլիչային սարքավորումների և ապակու գործարանների կոլեկտիվները։ «Ստրոմմաշինա» գործարանի մեխանիկական ցեխում մշակվում են բալաստ հղկող ունիվերսալ հաստոցի առաջին դետալները, դարբնոցա-մամլիչային սարքավորումների գործարանում հաջողությամբ փորձարկվեցին մամլիչի առաջին երկու նմուշները։



Նրանք կանգնել են ներքևում և կկոցած աչքերի հայացքներով ուղղել երկնքյան կապո՜ւյտ, կապո՜ւյտ երկնքին, վերելակ գործարանային կորպուսին։ Տեսե՛ք ինչ հպարտ է նրանց կեցվածքը, ինչ հմայիչ են կառուցող ձեռքերը... Նրանք՝ «Հայքիմմաշշին» տրեստի № 2 շինվարչության երկու երիտասարդ շինարարներ՝ մոնտաժող Զավեն Ռեշիջյանը և գաղղների բրիգադի բրիգադիր Ռաֆիկ Նազարյանը, նայում են արդեն վեր խոյացող «Պոլիվինիլացետատ» գործարանի նոր կորպուսին։

Երիտասարդ շինարարները հայտնի են պատասխանատվության ... տխրապախիծ հանգիստներով։ Նրանք երկնակամարի տակ, անձրևի ու քամիների տակ են անցկացնում օրերը։ Արշալույսին, նրանք 1946 թվականին եկան փոքրության ափ՝ Սովետական Հայաստան։ Կյանքը նրանց առաջ երջանիկ հեռանկարներ բացեց։ Անցել են տարիներ։ Հայրենադարձ երիտասարդները դարձել են շնորհալի մարդիկ՝ ճանաչված շինարարներ։

Լուսանկար՝ Վ. ՍԻՎՈՅԱՆԻ

Ձմեռ է... Ձյան սպիտակ, ալյուրանման բյուրեղներով են ծածկվել փողոցներ, մերկ ծառեր, ամեն ինչ... Լավ է նաև ձնագնդի խաղալը։

Էտյուդային լուսանկար՝ Վ. ՍԻՎՈՅԱՆԻ

ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՆԳՍՏԻ ՀԱՄԱՐ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Առանձնասենյակում նստած մարդը ուշադիր լսում էր բոլոր նրանց, ովքեր, կարծես խոսքերը մեկ արած, եկել էին առաջարկություններ անելու, ասելու իրենց հուզող հարցերի մասին, պահանջելու այն ամենը, ինչ իրենց կարծիքով ոչ միայն բոլորի ցանկությունն է, այլև անհրաժեշտություն։

Սեղանի առջև դրված բազկաթոռի վրա նստած մարդը ուշադիր լսում էր նրանց ու գոհունակության ժպիտը դեմքին՝ մատիտով նշումներ էր անում ծոցատետրում։ Նրա համար դա սովորական օրերից մեկն էր։ Այժմ միշտ էլ բազմամարդ է լինում կուլտուրայի այդ օջախը։

Բայց այդպես չէր առաջ։ Հիշում է, աշխատավոր մարդիկ, ածել թե ջահել, պատանի թե աղջիկ, դաշտում աշխատանքները վերջացնելուց հետո դժվարությամբ էին գալիս կուլտուրայի տուն։

Այդ անհանգստացնում էր դիրեկտորին։ Երբ նա փորձում էր դաշտում աշխատող մարդկանց կուլտուրայի տուն հրավիրել, ոմանք սառնությամբ պատասխանում էին.

— Աշխատանքից հետո պետք է հանգստանալ...

— Կուլտուրայի տունը հանգստի ամենալավ վայրն է,— հազիվ զսպելով զայրույթը, բացատրում էր դիրեկտորը և առանց հույսը կտրելու, համառորեն աշխատում էր, որոնում նոր ձևեր ու մեթոդներ մարդկանց հանգիստը հետաքրքիր կազմակերպելու համար...

...Գյուղատնտեսական աշխատանքի եռուն օրերն էին։ Մարդիկ պայքարում էին պատվով կատարել ստանձնած պարտավորությունները, որպեսզի նոր հաջողությունների հասնեին յոթնամյակի երրորդ տարում։ Օրն արդեն կիսվել էր, երբ աշխատավորները նստեցին հանգստի։ Հենց այդ պահին էլ նրանք նկատեցին իրենց մոտեցող դիրեկտորին։

Ծառի ստվերում բացված սեղանի շուրջը հավաքվածները հետաքրքիր շատ բան լսեցին աշխարհի տարբեր ծայրերում տեղի ունեցող իրադարձությունների մասին։ Իսկ, երբ նա վերջացրեց զրույցը, տարեց մարդիկ միջամտեցին.

— Շարունակեք, ընկեր Ալեքսան...

— Բավական է, հիմա էլ շախմատ խաղանք,— առարկեցին ջահելները։

Դիրեկտորը և՛ շախմատ էր խաղում, և՛ զրուցում։ Բայց երբ զգաց, որ խաղընկերը տարվում է, հավաքեց շախմատը, պատճառաբանելով.

— Չեմ ցանկանում խանգարել Ձեզ։ Ընդմիջումը վերջացավ։ Իսկ դու, Գառուշ, եթե ցանկանում ես, երեկոյան ինձ մոտ արի, կշարունակենք կիսատ թողած պարտիան։

Նման այցելությունները դիրեկտորը բազմապատկեց։ Շուտով կուլտուրայի տունը լցվեց երիտասարդներով։ Գնալով նրանց թիվն ավելանում էր։ Կազմակերպվող «Մեր այգեգործները», «Ինչպես կարելի է շատ կաթ ստանալ» և այլ թեմատիկ երեկոները մեծ հետաքրքրություն էին առաջացնում ներկաների մեջ։

Առաջին հաջողություններից ոգևորված, դիրեկտորը մեկ՝ երգի ու պարի անսամբլն էր կոմպլեկտավորում, մեկ էլ նորանոր մարդիկ էր ցուցակագրում շախմատի, սեղանի թենիսի, թեթև ու ծանր ատլետիկայի, հեծանվի, ըմբշամարտի և մյուս խմբակների աշխատանքներին մասնակցելու համար։

Արդեն ստեղծված ակտիվի միջոցով դեպի ֆերմաներ, այգեգործական ու դաշտավարական բրիգադներ էին տարվում շրջիկ գրադարանները։

Թատերական խմբի անդամները բեմադրեցին «Նվիրական երգ», «Որդու վերադարձը», «Սեր և գժտություն» ներկայացումները։

Աշխուժացավ գրադարանի աշխատանքը։

Հոկտեմբերյանի շրջանում մեծ է Հոկտեմբեր գյուղի Վ. Ի. Լենինի անվան կոլտնտեսության կուլտուրայի տան համբավը։

Այդ մասին իր հաշվետու զեկուցման մեջ խոսեց նաև ՀԼԿԵՄ Հոկտեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղար Հայկ Բարեղամյանը։ Ու երբ կոնֆերանսում առաջարկեցին ՀԼԿԵՄ XXI համագումարի պատգամավոր ընտրել կուլտուրայի տան դիրեկտոր Ալեքսան Սողոմոնյանին, ոչ ոք չառարկեց։

Երբ զրուցում ես Ալեքսանի հետ, նա մանրամասնորեն պատմում է կատարված աշխատանքների մասին, տեղյակ պահում իր ծրագրերի, ապագա անելիքների մասին, այն անելիքների, որոնց շնորհիվ ավելի բովանդակալից կդառնա գյուղի մարդկանց հանգիստը։

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՊԱՐԱՐՏԱՑՆՈՒՄ ԵՆ ԴԱՇՏԵՐԸ

ԳՈՐԻՍ, 6 հունվարի (ՀՀԳ).—Ձմեռվա ցրտաշունչ այս օրերին Խնձորեսկ գյուղի «Լենինյան ուղի» կոլտնտեսության դաշտերում աշխատանքային եռուզեռ է տիրում։ Քառասունից ավելի կոլտնտեսականներ արտելի տասը ավտոմեքենաներով ամեն օր դաշտ են փոխադրում աղբը։ Նրանք մի քանի օրում տեղափոխել են շուրջ 1.500 տոննա գոմաղբ ու պարարտացրել ծխախոտի, ճակնդեղի և եգիպտացորենի մշակության համար հատկացված 67 հեկտար հողատարածությունը և ապա՝ հերկել։

Դաշտերի պարարտացման ուղղությամբ խրախուսելի աշխատանք են կատարում նաև Խնածախի, Բալանդուրի, Տեղի, շրջկենտրոնի կոլտնտեսությունները և Վերիշենի սովխոզը։

Միայն վերջին տասն օրում շրջանում դաշտ է տեղափոխվել շուրջ 4.000 տոննա գոմաղբ։

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻՆ

ԱՇՏԱՐԱԿ, 6 հունվարի (ՀՀԳ).— Աշտարակ ավանի կոլտնտեսությունը յոթնամյակի չորրորդ տարվա գարնանացանը դիմավորում է կազմ ու պատրաստ։ Մեխանիզատորների բրիգադը, որի ղեկավարն է Վազգեն Զալյանը, արդեն նորոգել է հինգ տրակտորներ, չորս գութաններ, մեկ կուլտիվատոր, մեկ շարքացան։ Արհեստանոցում արագորեն շարունակվում է գյուղատնտեսական մյուս գործիքների նորոգումը։

Զտվել և պետական կոնդիցիայի է հասցվել սերմացուն։

Գարնան նախապատրաստական աշխատանքները հաջող են ընթանում նաև շրջանի Կոշ, Ուջան, Զորափ, Ագարակ, Օշական, Ոսկեվազ գյուղերի կոլտնտեսություններում։

ՋՈՒԼՀԱԿՈՒՀԻՆ

Մեծ թվով երիտասարդ աղջիկներ են աշխատում Լենինականի տեքստիլ կոմբինատում։ Նրանցից մեկը բանվորուհի Սիրուշ Հովհաննիսյանն է։ Նա էլ է արտադրության եկել ֆաբրիկա-գործարանային ուսումնարանից և 15 տարի է, ինչ աշխատում է որպես բանվորուհի։ Ու ամեն անգամ, երբ խոսք է բացվում արտադրության առաջավորների մասին, առաջինը տրվում է Սիրուշի անունը։

Ահա թե ինչու։

Ասենք թե գնում եք և կանգնում հաստոցներից մեկի մոտ, կտրվում է թելերից մեկը։ Նա այնքան արագ ու վարժ է կատարում այդ պրոցեսը, որ կողմնակի մարդը չի զգում, թե նա երբ կանգնեցրեց և երբ գործի գցեց հաստոցը։ Ինչո՞ւ միայն այս օրինակը։ Հիմնի թելի կտրվածքը վերացնելու համար նախատեսված է 21 վայրկյան, բայց նա այդ կատարում է 17 վայրկյանում։ Սիրուշը երկու վայրկյանով կրճատել է նաև մաքի, լամելկայի և մաքոքի միջով թելի անցկացման համար նախատեսված ժամանակամիջոցը։ Անցյալ տարվա 10 ամսում առաջավոր բանվորուհին արդեն կատարել էր իր տարեկան պլանը և նախատեսվածից ավելի տվել հազարավոր մետր բարձրորակ գործվածք։

Անվանի բանվորուհին միաժամանակ լայն պայքար է ծավալել վայրկյանի համար։ Միայն թելի կտրվածքը միացնելու համար նա տնտեսում է երեք հազար վայրկյան։ Բանվորուհին վայրկյանների տնտեսում է կատարում նաև գործվածքը փոխելու ժամանակ։ Հաշվումները ցույց են տալիս, որ Սիրուշ Հովհաննիսյանի վայրկյանների տնտեսման հաշվին ամեն ամիս լրացուցիչ թողարկվում է 50—70 մետր գործվածք։ Լավ աշխատանքի համար առաջավոր բանվորուհին պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով։

Ա. ՄԻՐԱՆ

ՀՐԱՇԱԼԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԱՇՏԱՐԱԿ, 6 հունվարի (ՀՀԳ).— Կարբիի կոլտնտեսության պարտկազմակերպությանը կից գյուղատնտեսության էկոնոմիկան ուսումնասիրող սեմինարի հերթական պարապմունքը նվիրված էր կոլտնտեսության զարգացման հեռանկարներին։

— Մեր արտելը,— ասաց պրոպագանդիստ, գյուղատնտես Սենիկ Սանփանյանը,— մինչև այժմ հիմնականում զբաղվել է հացահատիկային կուլտուրաների և մասամբ էլ ծխախոտի մշակությամբ։ Այժմ արտելի զարգացման հեռանկարները փոխվում են։ Արդեն ավարտվել են Ապարանի ջրամբարի կառուցման նախապատրաստական աշխատանքները, սկսած 1963 թվականից մեր դաշտերը ջուր կստանան և այժմյան ընդարձակ, ճահճոտ տարածությունները կծածկվեն կանաչախիտ այգիներով։

Այնուհետև պրոպագանդիստը նշում է, որ արտելի զարգացման 20-ամյա պլանով նախատեսվում է ավելի քան 500 հեկտար տարածության վրա մշակել խաղողի և պտղատու այգիներ։

Սեմինարի մասնակիցները անսահման ոգևորության մեջ են։ Նրանք տեղնուտեղը առաջ են քաշում ապագա այգետնկումներին նախապատրաստվելու հարցը։ Որոշվում է առաջիկա գարնանը Քասախի ձորում մի ընդարձակ տարածության վրա հիմնել պտղատու ծառերի նոր տնկարան, այն հաշվով, որ մոտ ապագայում կոլտնտեսությունն ապահովված լինի սեփական տնկանյութով։ Նշվում է, որ անհրաժեշտ է հատուկ խնամք տանել արդեն հիմնված տնկարանի նկատմամբ, որտեղ աճում են ավելի քան տասը հազար պտղատու տնկիներ։

Ապարանի ջրամբարի կառուցումը այգեգործությունը լայնորեն զարգացնելու հնարավորություն է ստեղծում նաև շրջանի Արտաշավան, Ուշի, Օհանավան և մի քանի այլ գյուղերի կոլտնտեսությունների համար։

ՔՆՆԱԹԵՐԹԻԿՈՒՄ ԳՐՎՈՒՄ Է «ԳԵՐԱԶԱՆՑ»...

Երևանյան ձմեռը ապակիներին սառցաբյուրեղյա ծաղիկներ է ջաղ տվել, ձյունագույն ծաղիկների հեքիաթներ: Սեղանին փռված թղթի վրա տարածվել է մատիտը: Այն դեռևս ոչ մի տող չի գրել: Իսկ սեղանի ձախ անկյունում դրված է կապտագույն մի թուղթ, որի վրա գրված է երեք հարց: Երիտասարդը՝ Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող Գուրգեն Մանուկյանը մի պահ հայացքը կտրել է կապույտ հարցատոմսից և նայում է պատուհանից դուրս... Մտածում է: Նա այսօր հանձնում է առաջին քննությունը միկրոբիոլոգիա առարկայից: Հիմա նրա աչքերը չեն տեսնում ապակիների բյուրեղածաղիկները, նա չի լսում մյուս նստարանին նստած աղջկա շշուկը, որը հարցնում է ինչ-որ միկրոօրգանիզմի լատիներեն անվանումը: Սրածայր մատիտը վազում է սպիտակ թղթի վրայով, նշումներ կատարում, որպեսզի պատասխանելիս ոչինչ չմոռացվի: Գուրգենը պատրաստ է: Նա մոտենում է լաբորատոր սարքերով, սրվակներով ծանրաբեռնված սեղանին և... Նրա ձայնի ելևէջները խախտում են քննասենյակի լռությունը: Գուրգեն Մանուկյանի պատասխանով սկսվեց միկրոբիոլոգիա առարկայի քննությունը: Քննասենյակի դռան մոտ հավաքված ագրոնոմիական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները սրտատրոփ սպասում էին դռան բացվելուն: Իսկ դռան վրա սովորականի նման շտապով գրված տառերը միջանցքի «[illegible]» զգուշացնում են՝ «քննություն է, չխանգարե՛լ»:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Սկսվել են ուսանողական ձմեռային քննությունները:

ՆԿԱՐՈՒՄ.— Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողուհիներ Լաուրա Գևորգյանը և Անժելա Ավագյանը պատրաստվում են առաջիկա քննությանը:

Լուսանկարը՝ Լ. ՄԱՏԻՆՅԱՆԻ

Ահա Գուրգենը պատասխանում է քննող դասախոսի լրացուցիչ հարցին: Նա այնպես է ոգևորվել, որ չի լսում՝ «բավական է» բառերը: Գուրգենը շարունակում է խոսել, իսկ քննաթերթիկում գրվում է՝ «գերազանց»: Հետո այդ նույն գրիչը «գերազանց» բառը արտագրում է Գուրգեն Մանուկյանի ստուգման գրքույկում: Ուսանողը պայծառ ժպիտը դեմքին դուրս է գալիս քննասենյակից: Այդտեղ էլ պայթում է միջանցքում սպասողների «տրադիցիոն» հարցը.

— Ի՞նչ...

Քննությունը շարունակվում է: Մեկը մյուսի ետևից քննասենյակից դուրս են գալիս ապագա ագրոնոմները, գիտնական գյուղատնտեսները: Նրանց մեծ մասը նախաքննական շրջանում մանրակրկիտ կերպով պարապել է, սերտել այդ առարկայի գործնական պարապմունքների թեմաները, կատարել լաբորատոր փորձեր: Եվ ահա այսօր բարձր գնահատականը նրանց ճակատից վանել է երեկվա ակոսը: Նրանք՝ ագրոնոմիական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողներ Լերմոնտ Բալյանը, Լիպարիտ Գևորգյանը, Արմավիր Ասլանյանը, Լյուդվիգ Ասատրյանը և ուրիշներ քննությունը հաջող հանձնելուց հետո հավաքվել են միջանցքում և զրուցում են, կատակում, միաժամանակ հետևում են, թե ով դուրս եկավ քննասենյակից, ինչպես է հանձնել քննությունը:

...Աղջիկը ամոթխած աչքերը մի պահ կարծես թաքցրեց: Նա հակել էր գլուխը, ոչինչ չէր ասում: Քննող դասախոսը ագրոնոմիական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Աիդա Պետրոսյանին մի նոր հարց առաջարկեց: Ուսանողուհին մեկից աշխուժացավ, սկսեց պատասխանել: Նա գիտի հարցը: Այո, բայց ինչու նա նախորդ հարցին չկարողացավ պատասխանել: Ա՜յ, դա արդեն լավ չէ: Պետք է յուրացնել բոլոր թեմաները, բարեխղճորեն կարդալ բոլոր էջերը: Դասախոսը խորհուրդ է տալիս ուսանողուհուն և ասում, որ «միջակ» գնահատականը քիչ է, չէ որ գոյություն ունեն «լավ» և «գերազանց» գնահատականներ:

Նույն օրն ինստիտուտի մի այլ քննասենյակում տիրում էին նույն հույզումներն ու ապրումները, նույնն էին հաջող քննություն հանձնողների ժպիտները... Մի տարբերությամբ միայն. քննություն էին հանձնում ագրոնոմիական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները՝ բուսաբանություն առարկայից: Նրանք այս տարի առաջին անգամ են քննություն հանձնում: Դուռը բացվում է, ստուգման գրքույկը ափերի մեջ սեղմած դուրս է գալիս Անվար Բրոյանը և համակուրսեցիներին է ցույց տալիս ձեռքի հինգ մատները՝ «գերազանց»: Ապարանում Անվարը դպրոցական արձակուրդների ժամանակ մեկ՝ գառնարած է եղել, մեկ՝ կոմբայնի վրա աշխատել, երբեմն էլ ֆերմայում անասուն է խնամել: Իսկ այժմ նա ուսանող է: Այսօր նա հանձնեց իր առաջին քննությունը և ստացավ «գերազանց» գնահատական: Հետո նա կհանձնի հաջորդ քննությունները: Անվար Բրոյանը դիպլոմով կվերադառնա իր հայրենի գյուղը՝ ագրոնոմ դարձած, մի նոր, լավ կենսագրություն կգրվի նրա ափերի կոշտուկներին:

Բարձր գնահատականներ են ստանում առաջին կուրսեցիներ Սամվել Թախվերդյանը, Ալբերտ Ջանոյանը, Օնիկ Մարտիրոսյանը և ուրիշներ:

Ամենից ուրախալին այն էր, որ ագրոնոմիական ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում ոչ ոք անբավարար գնահատական չստացավ:

Հետզհետե դատարկվում էին ինստիտուտի միջանցքները, լաբորատորիաները, քննասենյակները: Ուսանողներն շտապում էին տուն, հանրակացարան, տանելով իրենց քրտնաջան աշխատանքի առաջին պտուղները՝ դրական գնահատականները... Իսկ առջևում նոր քննություններ են, խոհերով, հույզումներով լի ուսանողական քննաշրջանի օրերը...

ՀՈՎՀ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻՑ» — ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Ամեն տարի հոկտեմբեր ամսի առաջին և երկրորդ շաբաթը, կիրակի օրերին Ալավերդու, Ստեփանավանի, Կիրովականի և Սպիտակի շրջաններից հարյուրավոր մարդիկ են գալիս Նոյեմբերյանի շրջկենտրոնից 4 կիլոմետր հեռավորության վրա գտնվող «Սուրբ Սարգիս» կոչվող ուխտատեղին: [illegible]

[illegible]

Միայն մեր [illegible] Սարգիս Սարիբեկյանն է «Սուրբ Սարգսի» մշտական հաճախորդը: [illegible]

[illegible]

Իսկ Սաքոն ասում է.

— Ես հավատացյալ չեմ, բայց շատ փող եմ վաստակում, դրա համար եմ գնում ուխտատեղի,— և ցույց է տալիս գրպանի փողերը. [illegible]

[illegible]

— [illegible]

— Ի՞նչ է պատահել:

— «Սուրբ Սարգսի» [illegible]

[illegible]

Երեկ ես [illegible] Նոյեմբերյանի հիվանդանոցի № 2 հիվանդասենյակ [illegible]

[illegible]

Այս անգամ հիշեցի Հովհ. Թումանյանի «[illegible]» [illegible]

[illegible] Մի՞թե այս հարցերը նրանց պլաններում չկան: Բայց ինչո՞ւ չպետք լինեն:

ՍԱՄՎԵԼ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Նոյեմբերյանի Հ. Թումանյանի անվան դպրոցի ուսուցիչ

[illegible]

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

[illegible]

Մարուսյա Կիկոյանը անցյալ տարի ավարտելով Լենինականի բժշկական տեխնիկումը, որպես բուժքույր աշխատանքի անցավ Արթիկի ռայոնային հիվանդանոցում: Նա այժմ իր բարեխիղճ աշխատանքով և դեպի հիվանդները ունեցած հոգատարությամբ վայելում է և՛ բուժկոլեկտիվի, և՛ քաղաքի բնակչության սերն ու հարգանքը:

Լուսանկարը՝ Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ԿԱՌՆԱՎԱԼ ԴՊՐՈՑՈՒՄ

ՆԿԱՐՈՒՄ.— Գ. Զեյթյանը և Ն. Սիմոնյանը պարելիս:

Երևանի № 74 դպրոցում տեղի ունեցավ դպրոցական ուրախ կառնավալ, որին մասնակցում էին բարձր դասարանցիներն ու նախկին շրջանավարտները, ինչպես նաև Կաբելի գործարանի բանվորները:

Գործարանի էստրադային նվագախումբը նվագեց «Աշակերտական վալսը»: Սանդուղքից սահելով իջնում են մասնակիցները՝ կարապի, բիբեռնիկի, գնչուհու դիմակներով:

Սկսվում են պարերը: Դպրոցի կոմերիտական կազմակերպության քարտուղարը ողջունում է կառնավալի մասնակիցներին: Կարծես տարվա բոլոր եղանակներն այստեղ էին իջել իրենց գույներով ու զարդերով: Երաժշտության ընթացքում նրանք միմյանց հետ փոխանակում էին տիկնիկներ:

Մասնակիցների համար կազմակերպված էր վիճակախաղ: Կառնավալն անցավ մեծ հաջողությամբ:

Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

ՆԿԱՐՈՒՄ.— Աշակերտներ (ձախից) Ա. Բաբախանյանը, Լ. Սարգսյանը, Վ. Դավթյանը և Ն. Խաչատրյանը ուրախ զրույցի են բռնվել:

Լուսանկարներ՝ Վ. ԽԱՐԱԶՅԱՆԻ

ՖԵՐՄԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է...

Ջրանապատ, ոչ բարձր լեռների շղթայով շրջապատված փռվել է Կալինինոյի շրջանի Ղարաքիլիսա գյուղը: Վերևում ուղիղ շարքերով ձգվում են անասնապահական ֆերմայի շենքերը:

Մի քանի տարի առաջ քչերը գիտեին այս ֆերմայի մասին: Իսկ հիմա... Մեկ տարում ֆերման հետամնացներից դարձավ առաջավոր, շահելով պարտշրջկոմի և շրջսովետի գործկոմի փոխանցիկ կարմիր դրոշը: Դրա «մեղավորները» ֆերմայի նոր տերերն էին՝ կոմերիտականները:

Ահա թե այդ ինչպես եղավ: Կոլտնտեսության վարչության նիստի օրակարգում դրված էր անասնապահական ֆերմայի հարցը, որտեղ կովերի կաթնատվությունը խիստ ընկել էր, աշխատող ձեռքերը պակասում էին, իսկ ֆերմա գնացողներ չկային:

Նիստին ներկա էր նաև կոմերիտական կազմակերպության քարտուղար Դոլցա Սարգսյանը: Նա ուշադիր լսում էր ելույթները:

— Իսկ ի՞նչ է մտածում երիտասարդությունը, կոմերիտական կազմակերպությունը,— հարցրեց վարչության անդամներից մեկը:

Դոլցան ոտքի կանգնեց, բայց ոչինչ չկարողացավ ասել և ինչ ասեր, երբ ոչինչ չէր արել:

Հաջորդ օրը Դոլցան արթնացավ սովորականից վաղ: Արագ խմելով թեյը, նա դուրս եկավ տնից: Նա գնում էր ֆերմա: Մտնելով կովանոցը, նա կանգ առավ: Այստեղ շատ մութ էր, միայն գոմի վերջում վառվում էր մի լամպ: Ապակեզուրկ պատուհաններից փչում էր ցուրտ քամի: Հենց որ աչքերը սովորեցին մթությանը, նա անցավ խորքը: Որ կողմը նայում էր՝ կեղտ: Կովերի ոտքերի տակ թափված էր խոտը, անասնակերը: Կովանոցի ծայրում, երբեմնի կարմիր անկյան տեղում, դրված էին դույլեր, բահեր և այլ գործիքներ: Պատերին փակցված էին դեղնած պլակատներ: Երկրորդ գոմում էլ նույն պատկերն էր:

Մի ժամից նա հավաքեց բոլոր կոմերիտականներին: Ինչ-որ հաճելի զգացում էր պաշարել նրան: Ում հետ զրուցել էր, բոլորը նույն կարծիքին էին՝ ֆերման վերցնել իրենց ձեռքը:

Օրն անցավ աննկատելի: Երեկոյան ակումբը բազմամարդ էր:

— Ի՞նչ կա բացատրելու,— Դոլցային ընդհատեց Բուրիկ Սարգսյանը, երբ նա սկսեց խոսել ֆերմայի մասին:— Ամեն ինչ պարզ է. ինձ գրի ֆերմայում կթվորուհի:

Նրա օրինակին հետևեցին մյուսները:

— Դե հիմա արդեն ամոթ չի լինի վարչություն մտնել,— մտածեց քարտուղարը, մի անգամ էլ աչքի անցկացնելով ցուցակը:— 19 մարդ:— Եվ մի փոքր դանդաղելով, 20-րդը գրեց իր ազգանունը:

Հաջորդ օրը, առաջին աքլորականչերի հետ, վեր կացան երիտասարդները:

Շատ բան արեցին նրանք այդ օրը: Բոլորը կրակով, աշխույժով էին աշխատում: Ոմանք դաշտ էին տանում գոմաղբը, ոմանք ապակիներն էին գցում, ոմանք էլ սպիտակեցնում էին պատերը:

Գյուղում արագորեն տարածվեց այն լուրը, թե կոմերիտականները վերցրել են ֆերմայի շեֆությունը:

— Մեկ շաբաթից հետո կփախչեն,— ասում էին որոշ մարդիկ:

Այս շշուկները հասան կոմերիտականներին:

— Ոչինչ, գործը ցույց կտա,— ասում էին տղաները:

Շուտով ֆերմայի նոր տերերը տեմպը ուժեղացրին: Ամեն ինչ հեշտ ու հանգիստ չէր: Միանգամից չհաջողվեց բարձրացնել կաթնատվությունը: Բայց երիտասարդ անասնապահները չէին ընկճվում: Մեկ ամսից հետո երևան եկան հաջողությունները: Սկզբում մի կթվորուհի գերակատարեց պլանը, հետո մյուսը, ապա՝ ամբողջ ֆերման:

Մի անգամ առավոտյան, կթից հետո Դոլցա Սարգսյանը տղաներին հավաքեց կարմիր անկյունում:

— Այդ ի՞նչ եք մեզանից թաքցնում,— դիմեցին աղջիկները տղաներին:

— Հետո կիմանաք:

Հաջորդ օրը ֆերմայի բակը մտավ խողովակներով, ռելսերով բեռնավորված մեքենան: Ամբողջ օրը ֆերմայում հնչում էր մուրճերի երգը: Տղաները պատրաստում էին ավտոմատ կթոցները, գոմաղբի տեղափոխման ճոպանը:

Անցավ մի քանի ամիս: Մի անգամ կոմերիտական-երիտասարդական ֆերմայի անասնապահներին կանչեցին կոլտնտեսության վարչություն:

— Կգնաք Կալինինո՝ անասնապահների խորհրդակցության,— ասացին նրանց:

Խորհրդակցությունից տղաները ուրախ վերադարձան: Պարտիայի XXII համագումարի բացման նախօրյակին նրանք իրենց հետ բերեցին շրջանի փոխանցիկ կարմիր դրոշը:

Գյուղում տղաներին լավ դիմավորեցին:

— Տեսեք, պինդ պահեք դրոշը,— ասում էին համագյուղացիները:

Բայց տղաները չէին էլ մտածել այն տալ որևէ մեկին: Վերջերս ֆերմայի երիտասարդությունը ֆերմորեն արձագանքեց մոսկվացիների կոչին. «Յուրաքանչյուրն իր լուման ներդնի կոմունիզմի կառուցման գործին»: Շատ կթվորուհիներ ժամկետից շուտ գերակատարեցին կաթնատվության տարեկան պլանը: Բուրիկ Սարգսյանը, Շուշան Գալստյանը, Ժենիկ Թավլյանը և ուրիշներ 11 ամսում կատարեցին 1961 թվականի տարեկան պլանը:

... Գիշերային աղջամուղջը իջել է գյուղի վրա: Վառվում են կոլտնտեսականների տների էլեկտրական լույսերը: Պայծառորեն լուսավորված է կոմերիտական-երիտասարդական ֆերման: Վաղուց վերջացել է երեկոյան կիթը: Բայց երիտասարդությունը մտադիր էլ չէ տուն գնալ: Մեկ անգամ ևս պետք է շրջել ֆերմայում: Իսկ հետո կարելի է և նստել ֆերմայի կարմիր անկյունում, զրուցել, խոսել նոր տարվա պլանների մասին:

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀՆԳՕՐՅԱԿՈՒՄ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները, կանգնելով աշխատանքային հերթափոխի, նոր տարվա յուրաքանչյուր օրը նշանավորում են աչքի ընկնող հաջողություններով:

Մեքենաշինական գործարանի կոլեկտիվը հունվարի առաջին օրից առաջադրանքները գերակատարում է 5—7 տոկոսով: Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի կոմունիստական աշխատանքի № 1 ցեխի բանվորները հունվարի առաջին հնգօրյակում պլանից դուրս թողարկեցին հինգ տոննա ամոնյակ:

Իրենց հնգօրյա առաջադրանքները զգալի չափով գերակատարել են նաև ճշգրիտ հաստոցաշինական, «Ավտոմատիկա» գործարանները, կոշիկի և կարի ֆաբրիկաները և այլ ձեռնարկությունները:

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՆԱՍՆԱՊԱՀԸ

Այս երիտասարդը Ռազմիկ Հովակիմյանն է: Նա աշխատում է Միկոյանի շրջանի Բաղարշայի կաթնա-անասնապահական սովխոզում որպես ավագ նախրապան: Ռազմիկի ղեկավարած բրիգադի անդամները անցյալ տարի յուրաքանչյուր կովից ստացան 2.400—2.500 լիտր կաթ:

Լուսանկարը՝ Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՈՒՐԱԽ ԵՐԵԿՈ

Հունվարի 4-ին պիոներդպրոցականների պալատում կազմակերպվեց ուրախ կառնավալ, որին մասնակցում էին մայրաքաղաքի պիոներ-ակտիվիստները, դրուժինայի խորհրդի նախագահներ, բարեկամության ակումբի անդամներ, պատի թերթի խմբագիրներ, ինչպես նաև՝ մանկական գրողներ: Կառնավալին մասնակցում էին Աֆղանստանից և այլ տեղերից եկած հյուրերը:

Կառնավալը տևեց մինչև ուշ երեկո և հիացմունք պատճառեց բոլորին:

Մ. ՋՐԲԱՇՅԱՆ

ԶԻՆՎՈՐ ՆԿԱՐԻՉԸ

Նվեր Դալաքյանը վաղ մանկությունից սիրեց բնությունը: Դեռևս երրորդ դասարանում սովորելիս նա բարձրանում էր լեռները և նկարում: Դրանք պարզ նկարներ էին, որ պատմում էին ընկերների մասին, հարազատ Հայաստանի բնության մասին: Նկարչությունից միայն «հինգ» էր ստանում: Դա նրա ամենասիրելի առարկան էր: Երբ վերջացնում էին դասերը, նստում էր ու տետրը լցնում նոր նկարներով:

Նվերն ավարտեց ութամյակը: Գնաց աշխատելու Երևանի Մեխանիկական գործարանում, որպես խառատի աշակերտ: Աշխատանքից հետո վերադառնում էր տուն ու սկսում նկարել:

Նա բանակում էլ չի բաժանվել վրձինից: Այստեղ էլ է նկարում, ստեղծել է «Արձակուրդում», «Միրագործություն», «Հայրենիքի պաշտպանության դիրքերում» և այլ նկարներ: Ալբոմը հարստանում է նոր նկարներով, էտյուդներով: Նա ինքը մարտական ու քաղաքական պատրաստության գերազանցիկ է, դիպուկ կրակի վարպետ, կարգային սպորտսմեն: Նրա լուսանկարը Պատվո տախտակի վրա է փակցված, նա հրամանատարությունից 26 շնորհակալագիր է ստացել: Դրանց թվում է նաև ՍՍՀՄ Պաշտպանության մինիստրից ստացած շնորհակալագիրը: Նա ակտիվորեն մասնակցում է պատի թերթերի գեղարվեստական ձևավորմանը, նրա նկարները տպագրվում են «Սին Ռոդինի» և այլ թերթերում:

Օ. ՄԱԼԻՆՈՎՍԿԻ

ՋԱՄԱԼՈՒԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Այսօրվա պես հիշում եմ: 1921 թվականի փետրվարի լույս տասնվեցի գիշերը Լոռվա ապստամբ բնակիչները, 11-րդ Կարմիր Բանակի հրամանատարների և մարտիկների օգնությամբ, գրոհով վերցրին Ջամալուի կամուրջը: Ապստամբների մեջ էին Քոլագիրանի, Ջորագյուղի, Շահալուի և Լոռվա մի շարք գյուղերի կոմունիստներն ու կոմերիտականները: Զինված մենշևիկների համառ դիմադրությանը, կամուրջը վերջնականապես անցավ կարմիրների ձեռքը: Կամուրջը չափազանց կարևոր նշանակություն ուներ, քանի որ դա միակ կապն էր Թբիլիսի—Երևան տանող երկաթուղային ճանապարհին:

Ինչ գնով էլ լիներ, պետք է այն պաշտպանվեր: Կամուրջն սկզբում մեկ ամիս պաշտպանեցին երկաթուղային պահակները, որից հետո կամրջի պաշտպանությունը հանձնվեց Լոռվա գյուղերի կոմունիստներին ու կոմերիտականներին: Կոմունիստներն սկսեցին հերթապահել: Հարկավոր էր նրանց օգնել:

Կուրթան գյուղի կոմսոմոլի բջջի քարտուղար Սարգիս Եգանյանը կոմերիտական ժողովում հայտարարեց.

— Տղե՛րք, կուսբջջկոմից ստացել ենք հատուկ հանձնարարություն. ինչպես Լոռվա մյուս գյուղերի կոմերիտականները, մենք՝ Կուրթանի կոմերիտականներս, նույնպես պետք է մասնակցենք Ջամալուի կամուրջի պաշտպանությանը: Ես առաջինը կգնամ...

— Մենք էլ կգանք,— բացականչեցին այս ու այն կողմից:

Հաջորդ օրը գյուղից դուրս եկավ կոմերիտականների մի խումբ և ուղղվեց դեպի Ջամալուի կամուրջը, որը գտնվում էր Շահալուի կայարանի մոտ, Կուրթանից մոտ 15 կմ հեռավորության վրա:

Ջամալուի կամուրջը... Չորս կողմից շրջապատված եղևնու անտառներով, կանաչապատ բլուրներով: Նրա տակից հոսում է անհանգիստ Փամբակչայը, որը գարնանային հեղեղատներից ավելի է վարարում: Կամուրջը հարկավոր էր հսկել երեք կողմերից՝ երկու ծայրերը և ամենակարևորը՝ տակի մասը: Հերթապահությունը սահմանված էր պահակապետի կողմից: Կոմերիտականները հասան այնտեղ: Կոմսոմոլի բջջի քարտուղար Սարգիս Եգանյանը հավաքեց նրանց և ասաց.

— Տղե՛րք, նայեցեք կամուրջին, ինչքան բարձր է ու գեղեցիկ... չպետք է թողնենք, որ թշնամին մոտենա դրան, օգնենք կոմունիստներին և պաշտպանենք այն:

Գարնան առաջին ամիսն էր: Հյուսիսից փչում էր սառը քամի: Կանաչ եղևնիները դեռ ձյունապատ էին, Փամբակչայի ափերը՝ սառցակալած: Գիշերն անտառի կողմից լսվում էին անտառի բնակիչների զարհուրելի ձայները:

Հաջորդ օրը, ուշ գիշերին կոմունիստները մրսում էին: Վերջանում էր նրանց ուտելիքի պաշարը: Կոմերիտականները որոշեցին գնալ շրջակա գյուղերը և նրանց համար հաց ու հագուստ բերել:

Հաջորդ օրը ուշ գիշերին նրանք վերադարձան՝ իրենց հետ բերելով հաց, կարտոֆիլ, պանիր, հնամաշ կիսամուշտակներ, գուլպաներ և այլն: Քանի դեռ կոմերիտականները չէին ստացել ռազմական պատրաստություն, նրանք զբաղվում էին սննդի և հագուստի հայթայթման հարցով, իսկ երբ նրանք ռազմական փորձնական պարապմունքներում վարժվեցին, արդեն փոխարինում էին կոմունիստներին, պահպանում կամուրջը:

Եկավ մայիսը: Բնությունն սկսեց փթթել գարնան շնչից: Եղևնիները լրիվ ազատվեցին ձյունե պատյանից: Բլուրները ծածկվեցին թարմ կանաչով: Գետը վարարեց՝ իր հետ բերելով արմատախիլ արած ծառեր և խոշոր քարակտորներ:

Կոմերիտականները կամրջի պաշտպանությունն ավելի ուժեղացրին, որովհետև երբ անտառը կանաչում է, ավելի է խտանում, և թշնամիները կարող էին օգտվել դրանից, աննկատ մոտենալ կամրջին: Այդ բանը կանխելու համար կամրջից 200—300 մետր հեռավորության վրա նշանակվեցին նոր պահակակետեր:

Ամիսներ շարունակ կոմերիտականները, որոնց շարքերում էի նաև ես, աչալրջորեն հսկեցին կամուրջը:

* * *

Վաղուց արդեն անցել են այն տարիները...

Լոռվա ձորերն ավելի են գեղեցկացել, կամրջից քիչ հեռու տարածվում են կոլտնտեսության բերքառատ այգիները: Խիտ անտառները, որ առաջ ահ ու սարսափ էին տարածում շուրջը, այժմ դարձել են մանուկների և պիոներների ամենասիրված հանգստավայրերը: Փամբակչայի ափերին կառուցվել են սղոցարաններ, փայտամշակման կոմբինատներ, էլեկտրակայաններ, որոնք լուսավորում են Լոռվա մթին ձորերը:

Այո՛, անցել են այն տարիները:

Այժմ, երբ անցնում եմ այդ վայրերով ու տեսնում Ջամալուի հսկա կամուրջը, սիրտս լցվում է մի անսովոր հուզմունքով, հիշում եմ իմ հին ընկերներին, որոնց հետ գիշերներ ենք լուսացրել կամրջի կամարի տակ:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
1921 թվականի
կոմերիտական

ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ՀԻՆ ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ

Աշոտը ԵՐԴՈՒՄ Է ՏԱԼԻՍ

Կյանքում հիշարժան շատ օրեր են լինում: Սակայն զինվորի կենսագրության մեջ ամենաանմոռացը, թերևս, զինվորական երդումի ընդունման օրն է:

Շարային հրապարակ: Զինվորների շարքերը քարացել են: Ոչ մի շարժում: Այդ պահին, այդ հուզիչ րոպեներին զինվորները հավատարմության երդում են տալիս Հայրենիքին:

Դուրս են բերում զորամասի դրոշը: Նրա վրա փայլատակում է մարտական շքանշանը: Մեր հայրերը, ավագ եղբայրները հանդիսավոր երդում են տվել դրոշի հովանու ներքո: Նրանք, թշնամու դեմ մղած մարտերում, զենքը ձեռքներին պաշտպանում էին Հայրենիքի սրբազան սահմանները:

Զորամասի հրամանատարը ողջույնի խոսքով դիմում է շարքին: Այդ պահին ջերմ, հուզիչ զգացումը փոթորկում է ամեն մի մարտիկի սրտում:

Դեռևս մեկ ամիս առաջ շարքային Աշոտ Մելքոնյանն աշխատում էր Երևանի ավտոբուսային պարկում, որպես ավտոհավաքող: Իսկ այժմ նա, արդեն զինվորի համազգեստով, երդում է տալիս՝ հավատարիմ լինել Հայրենիքին: Նրա ձայնը կերկերում է, կտրվում: Մարտիկը կարդում է զինվորական երդման խոսքերը:

— Ես՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության քաղաքացիս, մտնելով Զինված Ուժերի շարքերը...

Այսօր Աշոտը երդում է տալիս Հայրենիքին, ժողովրդին, իր հրամանատարներին և ընկերներին: Եվ դա բոլորը չէ: Շարքային Մելքոնյանը խոստում է տալիս հորը:

Այո՛, հորը: Զինվորի հայրը՝ պահեստի գնդապետ Ավետիք Մելքոնյանը ներկա է երդման արարողությանը: Վետերանի կրծքին մարտական շատ պարգևներ կան:

Որդին հուզվում է: Հայրն ավելի է հուզվում: Նա, հազիվ զսպելով շուրթերը, որդու ետևից շշնջում է երդման բառերը:

Պահեստի գնդապետ Մելքոնյանն այսօրվա պես հիշում է իր երդում տալու օրը:

...Դա 1935 թվականի փետրվարի 23-ին էր, Կարմիր հրապարակում: Նա այն ժամանակ Սովետական Բանակի մոտորացման Ակադեմիայի ունկնդիր էր: Մարտիկները պաշտպանության ժողկոմի ետևից կրկնում էին սրբազան երդման բառերը և իրենց ստորագրություններն էին դնում այդ հուզիչ փաստաթղթի տակ:

— Աշոտ, տղաս, շնորհավորում եմ: Անչափ ուրախ եմ քեզ համար,— շշնջում է հայրը:

Հանդիսավոր մասն ավարտվեց: Երիտասարդ զինվորները հավաքվեցին լենինյան սենյակում: Պահեստի գնդապետ Մելքոնյանը նորեկներին պատմում է զինվորի պարտքի, պատվի, սրբազան պարտականությունների մասին: Այստեղ է նաև շարքային Աշոտ Մելքոնյանը:

— Ես կյանքի մեծ ուղի եմ անցել,— պատմում է գնդապետը:— Բայց միշտ ինձ հետ, իմ սրտում է եղել զինվորական երդումը:

Վետերանը հուզված է: Նա շատ բան հիշեց իր՝ տպավորություններով հարուստ բանակային կյանքից: Նա իրեն երջանիկ է զգում, տեսնելով զինվորական համազգեստով այդ երիտասարդ տղաներին:

— Աշոտ,— դիմեց հայրը որդուն:— Հրամանատարների, զինակիցներիդ ներկայությամբ ուզում եմ ասել հետևյալը. բարձր պահիր մեր, իմ հայրական պատիվը: Այնպես ծառայիր և այնպես սովորիր ռազմական գործը, որպեսզի միշտ լինես առջևում: Լսիր ավագներին, և դու կլինես իսկական մարտիկ, Հայրենիքի պաշտպան:

Այդ օրը կհիշվի ընդմիշտ: Շարքային Աշոտ Մելքոնյանը իր ծառայությունը բանակում սկսում է հոր ճանապարհով: Կասկած չի կարող լինել, որ նա սրբորեն կկատարի զինվորի պատվավոր ծառայությունը, կկատարի հոր պատգամը:

ՆԿԱՐՈՒՄ.— Պահեստի գնդապետ Ա. Մելքոնյանը լսում է իր տղայի երդումը:

Ծ. ՍԱՐԻՆ
Ավագ լեյտենանտ
Լուսանկարը՝ շարքային
Ի. ՑՈՒՐԿՈՎՍԿՈՒ

© National Library of Armenia

„ԵԿԵՔ ԵՐԱԶԵՆՔ“

„Պիոներ կանչ“-ի էջերից

Որքա՜ն քաղցր է, երբ խորասուզվում ես երազների աշխարհում, մտորում, խորհում ես քո ցանկությունների, ձգտումների, ապագայի մասին, իսկ որքա՜ն դժվար է, երբ ձեռքդ ես առնում գրիչն ու ցանկանում թղթի վրա գրի առնել քո պատկերացումներն ու խոհերը:

«Եկեք երազենք»— կոչ արեց «Պիոներ կանչ» թերթն իր պատանի ընթերցողներին: Այդ օրվանից խմբագրությունը սկսեց ստանալ նամակ նամակի ետևից, և այդ բոլորի արդյունքը եղավ այն, որ հունվարի 5-ին լույս ընծայվեց «Պիոներ կանչ» թերթի այս տարվա առաջին համարը:

Մեր ռեսպուբլիկայի տարբեր դպրոցներից ստացված նամակները, որոնք տեղադրված են թերթի էջերում, պատմում են պատանի երազողների ձգտումների, խոհերի մասին: Մեկը ցանկանում է ուսուցիչ դառնալ, մյուսը՝ բանվոր, երրորդը՝ երկրաբան, ինժեներ, տիեզերագնաց: [illegible] Կիրովականի Կարինե Մանուկյանը գրում է. «Ինչպես կուզեի [illegible] և աշխատել Կիրովականում նոր կառուցվող [illegible] գործարանում: Ես ու իմ ընկերը կյանքը կդարձնենք հրաշալի»:

«Այժմ մեր փողոցը շատ փոքր է,— գրում է երևանցի Անահիտ Թադևոսյանը,— նոր տնկած ծիլերը հազիվ են կանաչին տալիս: Կանցնեն տարիներ, և մեր փողոցը կլինի մեծ ու լուսավոր, իսկ ծիլերը՝ բարձր, կանաչ ծառեր»:

Նամակների մի մասում էլ նկարագրվում են 1981 թվականի մեր գյուղերն ու քաղաքները:

Թերթի միջին էջերը վերնագրված են. «Երբ մեծանամ, ես կդառնամ մի ջահ լուսավոր կոմունիզմի պայծառ ու լայն փողոցի համար»: Այդ տողերը նամակի փոխարեն խմբագրություն է ուղարկել Ղափանի շրջանի Առաջաձորի դպրոցի աշակերտուհի Ելենա Հակոբյանը:

Երկրորդ էջի ձախ անկյունում տեղավորված է մի լուսանկար. կարմրավզկապ պիոները սեղմում է Նիկիտա Սերգեևիչի ձեռքը: «Սովետական Հայաստանի 40-ամյակի տոնակատարությանը մասնակցելուց հետո, Երևանից վերադառնալու ճանապարհին, Ն. Ս. Խրուշչովը կանգ է առնում Այրում կայարանում, որտեղ և նրան է հանդիպում Լյովան: «Ես չէի սպասում, որ մեր այդ հանդիպման պահը կլուսանկարեր ընկ. Արտաշես Ճառոյանը,— գրում է Լյովա Մարգարյանը:— Ա՜խ, եթե իմանայի... կշրջվեի երեսով դեպի ձեզ, կլինեի Նիկիտա Սերգեևիչի հետ կողք-կողքի...»:

Մի ուրիշ նամակ՝ Երևանի № 91 դպրոցի 6-րդ դասարանի աշակերտուհի Նատալյա Բոշյանի նամակը պատմում է, թե ինչպես իրենց փողոցի երկայնքով աճել են վայրի ծառեր: Նատալյան երազում է իրենց փողոցում տեսնել պտղատու ծառեր, որպեսզի «20 տարի հետո մարդիկ, ավտոմեքենաները, բոլո՛ր-բոլո՛րը անցնեն պտղատու ծառերի միջով»:

Իսկ Էլարի միջնակարգ դպրոցի աշակերտ Սամվել Աղաջանյանը համոզված է, որ Էլարը մեծ քաղաք է դառնալու: «Ահա ես երազում եմ, կապրեմ Աբովյան քաղաքում,— գրում է նա իր նամակում,— և իմ աչքին երևում է մի նոր քաղաք. այդ մեր Էլարն է: Ես խնդրում եմ որոշում այն կոչել Աբովյանի անունով»:

Առանձնապես ուշագրավ են այն ծաղրանկարները, որոնք արվել են մի շարք նամակների հիման վրա:

Համարը ավելի նպատակային կդառնար, եթե էջերում ավելի շատ տեղ տրվեր այն նամակներին, որոնցում պիոներները պատմում են, թե իրենք կոնկրետ ինչ գործերով են մասնակցում մեր պարտիայի մշակած մեծ ծրագրի իրագործմանը:

Խրախուսելի նախաձեռնություն է հանդես բերել «Պիոներ կանչ» թերթի խմբագրությունը, լույս ընծայելով «Եկեք երազենք» համարը:

ԵՐԱԶԱՆՔՆԵՐ
20

«Պիոներ կանչ»-ի հունվարի 5-ի համարի 1-ին էջը:

ԲԱՆՎՈՐ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԸ

Օրեր առաջ Երևանի Արվեստի աշխատողների տանը բացվել էր երիտասարդ ինքնուս ստեղծագործողների հաշվետու ցուցահանդեսը: Այցելուները մեծ գոհունակությամբ էին դիտում այստեղ ցուցադրված աշխատանքները, հատկապես Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեխանիկական գործարանի [illegible] Հ. Սիմոնյանի, բանվոր Սմբատյանի և [illegible] Մկրտչյանի աշխատանքները:

Առանձնապես ուշադրության էին արժանի բանվոր Սամվել Սահակյանի քանդակները: Նրա մի հանի գործեր ցուցադրված են ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական տան քանդակների ցուցահանդեսում: Այստեղ է Ս. Սահակյանի «Դեպի երկինք» [illegible] ստեղծագործ քանդակը, [illegible] կանգնած մայր հողի վրա, իր ամբողջ էությամբ [illegible] ձեռքերով վեր է բարձրացրել մի [illegible]: Մեջ նաև գրված են Ս. Սահակյանի «Առատություն» և «Վերածնված Հայաստան» քանդակները, գինու [illegible], բաժակներ, կճուճներ, որոնք պատրաստված են [illegible] զարդանախշերով: Ս. Սահակյանի [illegible] լավագույն նմուշներից մեկը գտնվում է Լենինգրադի [illegible]: Այստեղ է և Ս. Սահակյանի [illegible] քանդակը, որը պատրաստված է [illegible]:

Անցյալ տարվա օգոստոսին Մոսկվայում կազմակերպված ինքնուս բանվոր-քանդակագործների համամիութենական ցուցահանդեսում Ս. Սահակյանը հանդես եկավ իր երկու [illegible], [illegible]:

Իսկ նախամրցին Մոսկվայում կազմակերպված համաշխարհային ցուցահանդեսի համար ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական տան քանդակներից վերցված նմուշների թվում ընտրվեց նաև Ս. Սահակյանի «[illegible]» ([illegible]):

Վ. [illegible]

ՆԿԱՐՈՒՄ — Ս. Սահակյանը

1962 ԹՎԱԿԱՆԸ ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿԱՅԻ ՏԱՐԻ…

Տարեց-տարի «միջսեզոնայնությունը» կրճատվում է: Սովորականից շատ շուտ՝ փետրվարի 23-ին, սկսվելու է թեթև ատլետների Սովետական Միության 1962 թվականի չեմպիոնատը:

ՍՍՌՄ թեթև ատլետիկայի ֆեդերացիայի հաստատած՝ 1962 թվականի օրացույցում հաճելի նորություն կա. 1962 թվականին տեղի են ունենալու Սովետական Միության չեմպիոնատները 17—18 տարեկան պատանիների և աղջիկների համար և 19—20 տարեկան սպորտսմենների համար: Պատանի սպորտսմենները կհանդիպեն օգոստոսին, Լենինգրադում, իսկ 19—20 տարեկան սպորտսմենները՝ սեպտեմբերի երկրորդ կեսում, Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում: Տարեց-տարի սովետական թեթև ատլետների մեջ ավելի և ավելի մեծ մասսայականություն են վայելում տրադիցիոն Համամիութենական ձմեռային մրցումները փակ շենքերում: Դրանք անցկացվում են Լենինգրադի հիանալի թեթև ատլետիկական մանեժում, այնտեղ, որտեղ ընթացիկ տարվա սկզբին Վալերի Բրումելը թեթև ատլետիկայի պատմության մեջ առաջին անգամ հաղթահարեց 2 մետր 25 սանտիմետր բարձրությունը: 1962 թվականի ձմեռային մրցումները կայանալու են մարտի 23—25-ը:

1962 թվականին հինգերորդ անգամ կկայանա եղբայրներ Գեորգի ու Սերաֆիմ Զնամենսկիների մրցանակի տրադիցիոն մրցումները: Աշխարհի ուժեղագույն թեթև ատլետները կհանդիպեն Մոսկվայում, հունիսի 30-ից մինչև հուլիսի 1-ը: Սկավառակ նետող, ամերիկացի Ջեյ Սիլվեստրը Մոսկվայում հանդես գալուց մի քանի օր անց, այս տարի, սկավառակի նետումից համաշխարհային ռեկորդ սահմանեց:

Առաջիկա սեզոնում սովետական թեթև ատլետները կմասնակցեն ավելի քան 30 միջազգային մրցումների: ՍՍՌՄ հավաքական թիմը հանդես կգա միայն երկու պաշտոնական մրցումներում՝ հուլիսի 21—22-ը Կալիֆորնիայում, ՍՍՌՄ—ԱՄՆ թեթև ատլետիկական թիմերի տրադիցիոն հանդիպմանը և սեպտեմբերի 12—16-ը՝ Բելգրադում, թեթև ատլետիկայի գծով Եվրոպայի չեմպիոնատում:

Մայիսի կեսերին երկրի տարբեր քաղաքներում կկայանան սովետական թեթև ատլետների զոնալ մասսային հանդիպումները: Կենտրոնական գոտու, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մոսկվայի ու Լենինգրադի սպորտսմենները կհավաքվեն Լենինգրադում: Վիլնյուսում կհավաքվեն Էստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի թեթև ատլետները: Երևան կգան Վրաստանի, Հայաստանի, Մոլդավիայի ու Ադրբեջանի սպորտսմենները: Դուշանբե քաղաքում կհանդիպեն Ղազախստանի, Ուզբեկստանի, Թուրքմենիայի ու Տաջիկստանի թեթև ատլետները:

Թեթև ատլետիկայի գծով Սովետական Միության անհատական առաջնությունը կանցկացվի Մոսկվայում, օգոստոսի 4—6-ը, իսկ թիմայինը կկայանա հոկտեմբերի 13—15-ը և 21—22-ը, Տաշքենտում:

Անհատական թիմային առաջնության մասնագիտացված Համամիութենական մրցումները անցկացվելու են գյուղական թեթև ատլետների միջև: Դրանք կայանալու են օգոստոսի կեսերին, Կրասնոդարում:

Աշխարհ

ԼՈՒՐԵՐ ՌՈՒՄԻՆԻԱՅԻՑ

ՊԱՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՏՈՒՐՆԻՐՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Բուխարեստում սկսել են նախապատրաստվել պատանեկան թիմերի համար առաջիկա միջազգային ֆուտբոլային տուրնիրին: Տուրնիրը տեղի կունենա 1962 թվականի ապրիլի 19-ից 29-ը:

Նախնական 4 խմբերի հանդիպումները տեղի կունենան Բուխարեստում, Պլոյեշտիում, Բրաշովում ու Կոնստանցայում: Այդ քաղաքների միջև հեռավորությունը համեմատաբար մեծ չէ: Բուխարեստից մինչև Պլոյեշտի ընդամենը 60 կիլոմետր է, մինչև Բրաշով՝ 175 կիլոմետր, իսկ մինչև Կոնստանցա՝ 200 կիլոմետր:

Բոլոր չորս քաղաքներն էլ մեծ ստադիոններ, հիանալի ֆուտբոլի դաշտ ունեն: Օրինակ, Բուխարեստի «Օգոստոսի 23-ի» ստադիոնը նախատեսված է մոտավորապես 100 հազար տեղի համար: Մայրաքաղաքի մյուս երկու ստադիոնները, որոնք տրամադրվելու են մրցումների մասնակիցներին,— «Ռեսպուբլիկան»՝ 35 հազար տեղի համար, «Դինամոն»՝ 25 հազար տեղի համար: Կոնստանցայի (30 հազար տեղ), Պլոյեշտիի (15 հազար) և Բրաշովի (15 հազար) ստադիոնները ժամանակակից սպորտային քաղաքներ են:

Մասնակիցների համար ստեղծվելու են անհրաժեշտ բոլոր պայմանները: Այն հյուրանոցներում, որտեղ տեղավորվելու են սպորտային պատվիրակությունները, հատուկ ակումբներ են ստեղծվում, որտեղ լինելու են ռադիոընդունիչներ, հեռուստացույցներ, սեղանի թենիսի սեղաններ, շախմատ և այլ խաղեր: Հյուրերը կարող են [illegible] [illegible], [illegible] էքսկուրսիաներ [illegible] [illegible] [illegible]:

[illegible] ձմեռ է: Գետերը և լճերը ծածկված են սառույցով: Մարզումներ են սկսել առագաստավոր սպորտսմենները:

ՆԿԱՐՈՒՄ.— ՍՍՌՄ չեմպիոն Ա. [illegible] (ձախ) և է. [illegible] մարզումների ժամանակ:

Լուսանկար՝ Գ. ԿՈՒԶՆԵՑՈՎԻ (ՏԱՍՍ)

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երևանի «Սպարտակ» սպորտընկերության մարզադահլիճում տեղի են կայանում 15—16 տարեկան աղջիկների և պատանիների վոլեյբոլի համամիութենական առաջնության մրցումները, որոնց մասնակցում են Կիևի, Կրասնոդարի, Բաքվի, Քիշինևի, Թբիլիսիի, Գրոզնու և Երևանի թիմերը:

Առաջնության երկրորդ տուրի ամենահետաքրքիր հանդիպումը Երևանի և Կիևի պատանի վոլեյբոլիստների հանդիպումն էր: Երևանցիները հաղթեցին 2:1 հաշվով: Նույն հաշվով Քիշինևի աղջիկները հանդիպումը շահեցին Կիևի վոլեյբոլիստուհիներից: Բաքվի և Թբիլիսիի աղջիկները 0:2 հաշվով պարտության մատնեցին Կրասնոդարի և Երևանի թիմերին:

Երկրորդ տուրից հետո աղջիկների առաջնության աղյուսակը 2-ական միավորով գլխավորում են Թբիլիսիի և Քիշինևի, իսկ պատանիներինը՝ Երևանի ու Թբիլիսիի թիմերը:

Մրցումները շարունակվում են:

ՌԱՖԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Մրցումների դատավոր

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔ

ԱՃՈՒՄ Է ՕՊՈԶԻՑԻԱՆ ՍԱԼԱԶԱՐԻ ՌԵԺԻՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԼՈՆԴՈՆ, 6 հունվարի (ՏԱՍՍ).— Անգլիական մամուլը Բեժայի պորտուգալական հայրենասերների օրերս տեղի ունեցած ապստամբությունը գնահատում է իբրև մի նոր վկայություն այն բանի, որ ավելի ու ավելի մեծ թվով պորտուգալացիներ են խրախուսում Սալազարի արյունոտ դիկտատուրայի հակառակորդների շարքերը:

Սալազարի տապալման փորձեր, գրում է «Տրիբյուն» շաբաթաթերթը, բազմիցս ձեռնարկվել են նախ առաջներում, սակայն դրանց չեն մասնակցել բանվորներ և գյուղացիներ: Իսկ այժմ «Բեժայի ապստամբների մեծ մասը կազմում էին երիտասարդ բանվորները»:

«Էկոնոմիստ» հանդեսը նույնպես նշում է, որ, դատելով բոլոր Պորտուգալիայից բախանցող հաղորդագրությունների, «Սալազարի ռեժիմի ակտիվ հակառակորդներին հարում են նորանոր տարրեր»: Հանդեսը նշում է, որ Սալազարի երկրամասում օպոզիցիան ավելի ու ավելի վճռական և կազմակերպված է դառնում:

ՑՈՒՅՑԸ ԱՐԳԵԼՎԱԾ Է

ՓԱՐԻԶ, 6 հունվարի (ՏԱՍՍ).— Ֆրանսիայի ներքին գործերի մինիստրությունը արգելեց ֆաշիստական տեռորի դեմ ուղղված բողոքի այն ցույցը, որը Ֆրանսիայի Կոմունիստական պարտիայի կոչով նախատեսված էր այսօր անցկացնել Փարիզում:

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՊՐՈՎՈԿԱՑԻԱ

ՓԱՐԻԶ, 6 հունվարի (ՏԱՍՍ).— Ֆրանսիայում չեն հանդարտվում ֆաշիստական պրովոկատորները: Ֆրանսիայի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի շենքի վրա ավազակային հարձակումից հետո [illegible] այս գիշեր հարձակում գործեցին Կոմպարտիայի Լիլի կազմակերպության շենքի վրա: Ֆաշիստների պայթեցրած ռումբը մեծ վնաս է պատճառել շենքին:

Ֆիզկուլտուրա և սպորտ

ՉՄՈՌԱՆԱԼ ՄՅՈՒՍ ՁԵՎԵՐԸ

Երևանցիների մեծ մասը սիրում է սպորտը և հատկապես՝ ֆուտբոլը: Բայց ինձ թվում է, որ չի կարելի սահմանափակվել սպորտի միայն մի ձևով:

Ինչն է պատճառը, որ սպորտասերները ամենից շատ սիրում են ֆուտբոլը: Անշուշտ, ինչու, ռեսպուբլիկայի կոմերիտական և սպորտային կազմակերպությունները ամենից շատ ուշադրություն են դարձնում ֆուտբոլի վրա և մոռանում մյուս ձևերի պրոպագանդումը: Ինձ թվում է, որ դա ճիշտ չէ: Մեր պարտիան ու կառավարությունը պատշաճ ուշադրություն են դարձնում սպորտի բոլոր այն ձևերի վրա, որոնք ամրապնդում են սովետական երիտասարդության առողջությունն ու մարտունակությունը:

Անհրաժեշտ է, որ հաճախակի կազմակերպվեն սպորտի մյուս ձևերի, մասնավորապես բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, ջրային սպորտի սիստեմատիկ մրցումներ Հայաստանի ու մյուս ռեսպուբլիկաների թիմերի միջև: Լավ կլինի, որ թերթերում, ամսագրերում հայտարարություններ տպագրվեն սպորտի նշված ձևերի մրցումների մասին, թիմերի կազմի մասին և այլն:

Վերջերս «Դինամո» կամավոր սպորտային ընկերությունը վոլեյբոլիստների թիմ կազմակերպեց «Ա» խմբի գծով, որի մեջ մտան Հայաստանի լավագույն սպորտսմենները, որոնք պետք է մասնակցեն երկրի առաջնության մրցումներին:

Սակայն դեռևս չի լուծված օրինակելի վոլեյբոլի հրապարակ ունենալու հարցը: Իսկ Ֆիզկուլտուրնիկի տան բակում եղած հրապարակի տրիբունաներում ընդամենը 250—300 հանդիսատես է տեղավորվում:

Ժամանակն է, որ այս հարցերը նույնպես ուշադրության արժանանան:

Ս. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ



Կրասնոդարի [illegible]: «Պատրա՞ստ ես դու ապրելու կոմունիզմի օրով»— այս թեմայով բանավեճ տեղի ունեցավ [illegible] լուսավորության աշխատողների տանը: Այն կազմակերպել է № 30 միջնակարգ դպրոցի գրականության ուսուցչուհի Ե. Աբրահամյանը:

ՆԿԱՐՈՒՄ.— 11-րդ դասարանի աշակերտուհի [illegible] [illegible] ելույթում է կարդում «Ինչպիսին պետք է լինի կոմունիզմի կառուցողը» թեմայով:

Լուսանկար՝ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Խմբագիր՝ Լ. Մ. ԿՐՈՅԱՆ

ՀԼԿՍՄ Կենտկոմի կոլեկտիվը խոր վշտով ցավակցություն է հայտնում [illegible] Սևոյանին, հոր սիրելի եղբոր՝ ՔԱՆԻԿ ՍԵՎՈՅԱՆԻ վաղաժամ մահվան առթիվ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ — Երևան, [illegible] փող. № 1: ՀԵՌԱԽՈՍՆԵՐ — խմբագիր՝ 2-20-35, խմբագրի տեղակալ՝ 2-16-95, Պատասխանատու քարտուղար՝ 6-05-90, ԲԱԺԻՆՆԵՐ — Կոմերիտական կյանք՝ 2-19-72, Նամակների և մասսայական աշխատանքի, Ֆիզկուլտուրայի և սպորտի՝ 2-57-41, [illegible] աշխատանքի, Գրականության և արվեստի, [illegible] երիտասարդության, գիտության՝ 2-77-21, Ինֆորմացիայի՝ 6-05-90, [illegible]՝ 6-13-80, Հայտարարությունների՝ 2-65-11
ՎՖ 02412
Հայկական ՍՍՀ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և Պոլիգրաֆիայի [illegible] վարչության № 3 տպարան, Երևան, [illegible] փող. № 6: